

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▯B

Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգ

Ներքին շուկայի ձեւավորումն ավարտին հասցնելու նպատակով ներհամայնքային առեւտրի նկատմամբ կիրառելի անասնաբուժական եւ զոոտեխնիկական ստուգումների մասին

(ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 29)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		Թիվ	էջ	ամսաթիվ
M1	Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 15-ի 90/539/ԵՏՀ հրահանգով	L 303	6	31.10 1990
M2	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 27-ի 90/667/ԵՏՀ հրահանգով	L 363	51	27.12 1990
M3	Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 10-ի 90/675/ԵՏՀ հրահանգով	L 373	1	31.12 1990
M4	Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի 91/68/ԵՏՀ հրահանգով	L 46	19	19.02 1991
M5	Խորհրդի 1991 թվականի մարտի 25-ի 91/174/ԵՏՀ հրահանգով	L 85	37	05.04 1991
M6	Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի 91/496/ԵՏՀ հրահանգով	L 268	56	24.09 1991

M7	Խորհրդի 1991 թվականի նոյեմբերի 19-ի L 340 17 11.12 1991 91/628/ԵՏՀ հրահանգով
ՌM8	Խորհրդի 1992 թվականի հունիսի 30-ի 92/60/ԵՏՀ L 268 75 14.09 1992 հրահանգով
M9	Խորհրդի 1992 թվականի հուլիսի 13-ի 92/65/ԵՏՀ L 268 54 14.09 1992 հրահանգով
ՌM10	Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17-ի L 62 49 15.03 1993 92/118/ԵՏՀ հրահանգով
ՌM11	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 2002 L 315 14 19.11 2002 թվականի հոկտեմբերի 21-ի 2002/33/ԵՀ հրահանգով

▼B

Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգը «Ներքին շուկայի ձեւավորումն ավարտին հասցնելու նպատակով ներհամայնքային առեւտրի նկատմամբ կիրառելի անասնաբուժական եւ զոոտեխնիկական ստուգումների մասին»

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

¹ՊՏ թիվ C 225, 31. 8. 1998թ., էջ 4:

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

քանի որ Համայնքը պետք է ներքին շուկայի աստիճանական կարգով ստեղծմանն ուղղված ակտեր ընդունի մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը,

քանի որ անասնապահական արտադրանքի և կենդանական ծագում ունեցող արտադրանքի առումով շուկայի միասնական կազմակերպման ներդաշնակեցված գործառույթներով նախատեսվում է անասնաբուժության և անասնաբուծության ոլորտների խոչընդոտների վերացում՝ նշված արտադրանքի ներհամայնքային շուկայի զարգացման նպատակով, և քանի որ այս առումով կենդանիների և գյուղատնտեսական արտադրանքի ազատ տեղաշարժը շուկաների միասնական կազմակերպման հիմնարար հատկանիշն է և պետք է նպաստի գյուղատնտեսական արտադրության համամասն զարգացմանը և արտադրության գործոնների օպտիմալ օգտագործմանը,

քանի որ անասնաբուժության ոլորտում սահմանային գոտիներն օգտագործվում են հանրային և կենդանիների առողջության ապահովմանն ուղղված ստուգումների անցկացման նպատակով,

քանի որ վերջնական նպատակն ապահովելն է, որ անասնաբուժական ստուգումները իրականացվեն միայն առաքման վայրում, և քանի որ այս նպատակին հասնելու համար նախատեսվում է հանրային և կենդանիների առողջության ապահովման առումով հիմնական պահանջների ներդաշնակեցում,

քանի որ ներքին շուկայի ձեւավորումը ավարտին հասցնելու համար՝ նախքան սույն նպատակին հասնելը, շեշտը պետք է դրվի առաքման վայրում անցկացվող ստուգումների և այն ստուգումների կազմակերպման վրա, որոնք կարող են անցկացվել նշանակման վայրում, և քանի որ նման լուծումը կհանգեցնեք Համայնքի ներքին սահմաններում անասնաբուժական ստուգումների կասեցմանը, և քանի որ, այս համատեքստում, առողջության հավաստագիր կամ նույնականության փաստաթուղթ պահելու բավարար հիմքեր կան՝ ինչպես նախատեսված է Համայնքի կանոններով,

²ՊՏ թիվ C 326, 19. 12. 1998թ., էջ 28:

³ՊՏ թիվ C 56, 6. 3. 1989թ., էջ 20:

քանի որ հարցի այսպիսի լուծումը ենթադրում է առաքող երկրի կողմից իրականացվող անասնաբուժական ստուգումների նկատմամբ աճող վստահություն, մասնավորապես՝ տեղեկատվության արագ փոխանակման համակարգի ներդրմամբ. քանի որ առաքող անդամ պետությունը պետք է ապահովի, որ այդ անասնաբուժական ստուգումներն իրականացվեն պատշաճ կերպով,

քանի որ նպատակակետ հանդիսացող պետության տարածքում տեղային անասնաբուժական ստուգումներ կարող են իրականացվել նշանակման վայրում, քանի որ, այնուամենայնիվ, խախտման լուրջ կասկածի դեպքում, անասնաբուժական ստուգումները կարող են իրականացվել կենդանիների եւ արտադրանքի տարանցման ժամանակ եւ քանի որ հնարավոր է շարունակել կարանտին նշանակել այն տարածքներում, որտեղ ներդաշնակեցում չի կատարվել,

քանի որ պետք է դրույթ սահմանել՝ իրականացնելու համապատասխան գործողություն այն դեպքում, երբ անասնաբուժական ստուգմամբ բացահայտվում է, որ բեռը ցածրորակ է,

քանի որ անհրաժեշտ է դրույթ սահմանել այն հակասությունները հարթելու ընթացակարգի մասին, որոնք կարող են առաջանալ հաստատությունից, արտադրման կենտրոնից կամ ձեռնարկությունից ստացվող բեռների առումով,

քանի որ պետք է դրույթ սահմանել պաշտպանիչ միջոցառումների համար. քանի որ այս տարածքում, հատկապես արդյունավետության նկատառումներից ելնելով, պատասխանատվությունը պետք է առաջին հերթին դրվի առաքող անդամ պետության վրա, քանի որ Հանձնաժողովը պետք է արագ գործելու հնարավորություն ունենա, մասնավորապես՝ տեղում այցելություններ կատարելով եւ իրավիճակին համապատասխան միջոցներ ընդունելով,

քանի որ, արդյունավետության նկատառումներից ելնելով, սույն Հրահանգով սահմանված կանոնները պետք է տարածվեն բոլոր այն արտադրատեսակների վրա, որոնց նկատմամբ ներհամայնքային առեստրում կիրառվում են անասնաբուժական պահանջները,

քանի որ, այնուամենայնիվ, նկատի ունենալով ներդաշնակեցման ներկայիս վիճակը եւ Համայնքի ընդունման գործընթացում գտնվող օրենքները՝ ներդաշնակեցված կանոններին չհամապատասխանող կենդանիներն ու արտադրանքը պետք է ենթարկվեն նպատակակետ հանդիսացող պետության պահանջներին՝ պայմանով, որ վերջիններս լինեն Պայմանագրի 36-րդ հոդվածին համապատասխան,

քանի որ վերոնշյալ կանոնները պետք է կիրառվեն անասնաբուժական ստուգումների նկատմամբ,

քանի որ գործող հրահանգների դրույթները պետք է հարմարեցվեն սույն Հրահանգում սահմանված նոր կանոններին,

քանի որ այս կանոնները պետք է վերանայվեն մինչև 1993 թվականի վերջը,

քանի որ Հանձնաժողովին պետք է հանձնարարական տրվի, որպեսզի այն միջոցներ ընդունի սույն Հրահանգը կիրառելու համար, եւ քանի որ, այդ նպատակին հասնելու համար, Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակներում Հանձնաժողովի եւ անդամ պետությունների միջեւ սերտ եւ արդյունավետ համագործակցությունը հաստատող ընթացակարգերի համար դրույթ պետք է սահմանվի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ:

Հոդված 1

Անդամ պետություններն ապահովում են, որ Ա հոդվածում թվարկված հրահանգներով կարգավորվող կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող արտադրանքի կամ 21-րդ հոդվածի առաջին պարբերությամբ եւ առետրի համար նախատեսված արտադրանքի նկատմամբ իրականացվելիք անասնաբուժական ստուգումները, չսահմանափակելով 7-րդ հոդվածի դրույթները, չիրականացվեն սահմաններում, այլ իրականացվեն սույն Հրահանգի համաձայն:

Անդամ պետություններն այնուհետեւ ապահովում են, որ անասնաբուժական փաստաթղթերի ստուգումները համապատասխանեն սույն Հրահանգով սահմանված վերահսկողության կանոններին:

▼M7

Սույն Հրահանգը չի տարածվում այն ստուգումների վրա, որոնք իրականացվում են անդամ պետության մեջ օրենքների ընդհանուր կիրառման համար պատասխանատու իշխանավորների կողմից որպես ոչ խտրական ձեւով կատարվող առաջադրանքների մաս:

▼M8

Սույն Հրահանգը չի կիրառվում անդամ պետությունների միջև ֆիզիկական անձի կողմից ուղեկցվող եւ նրա պատասխանատվության ներքո գտնվող ընտանի կենդանիների տեղաշարժի հետ կապված՝ անասնաբուժական ստուգումների նկատմամբ, այն դեպքերում, երբ այդ տեղաշարժերն առետրային գործարքի առարկա չեն:

▼B

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով՝

1. «անասնաբուժական ստուգում» նշանակում է ցանկացած փաստացի ստուգում եւ (կամ) վարչական ընթացակարգ, որը կիրառվում է 1-ին հոդվածում նշված կենդանիների կամ արտադրանքի նկատմամբ եւ, որը նախատեսված է ուղղակի կամ այլ կերպ կենդանիների կամ հանրային առողջությունը պաշտպանելու համար,
2. «անասնաբուժական ստուգում» նշանակում է ցանկացած փաստացի եւ (կամ) վարչական ընթացակարգ, որը կիրառվում է սույն Հրահանգով կարգավորվող Ա հավելվածի II մասում նշված կենդանիների նկատմամբ եւ որը նախատեսված է տեսակների ուղղակի կամ անուղղակի բարելավման համար,
3. «առետուր» նշանակում է անդամ պետությունների միջև արտադրանքի առետուրը՝ Պայմանագրի 9 (2) հոդվածի իմաստով,
4. «հաստատություն» նշանակում է անդամ պետության տարածքում տեղակայված եւ ազգային գործող օրենքներով սահմանված գյուղատնտեսական ձեռնարկություն կամ բրոքերային գրասենյակ, որտեղ ժամանակավորապես մնում կամ մշտապես պահվում են ձիազգիներից բացի՝ Ա եւ Բ հավելվածներում նշված բոլոր մյուս կենդանիները, ինչպես նաեւ երրորդ երկրներից բերված կենդանի ձիազգիների տեղաշարժն ու ներմուծումը ղեկավարող՝ կենդանիների առողջության պայմանների մասին Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/426/ԵՏՀ հրահանգի 2 (ա) հոդվածով սահմանված հաստատությունը⁴,

⁴Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 42-րդ էջը:

5. «արտադրման կենտրոն կամ ձեռնարկություն» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որը արտադրում, պահուստավորում, վերամշակում կամ մշակում է 1-ին հոդվածում նշված արտադրանքը,
6. «իրավասու մարմին» նշանակում է անդամ պետության այն կենտրոնական մարմինը, որն իրավասու է իրականացնելու անասնաբուժական հսկողություն կամ ցանկացած մարմին, որին պատվիրակված է նման իրավասություն,
7. «անասնաբուժական պետական տեսուչ» նշանակում է իրավասու մարմնի կողմից նշանակված անասնաբույժը:

ԳԼՈՒԽ I

Ստուգումները ծագման վայրում

Հոդված 3

1. Անդամ պետությունն ապահովում է, որ առետրի առարկա լինեն միայն 1-ին հոդվածում նշված այն կենդանիներն ու արտադրանքը, որոնք բավարարում են հետեւյալ պայմանները.
- ա) Ա հոդվածում նշված կենդանիներն ու արտադրանքը պետք է բավարարեն տվյալ հավելվածում թվարկված՝ համապատասխան հրահանգների պահանջները, իսկ Բ հավելվածում նշված կենդանիներն ու արտադրանքը՝ նպատակակետ հանդիսացող անդամ պետության կողմից սահմանված կենդանիների առողջությանը վերաբերող պահանջները,
- բ) դրանք պետք է ծագեն այնպիսի հաստատություններից, արտադրման կենտրոններից կամ ձեռնարկություններից, որոնք, 3-րդ պարբերության համաձայն, պաշտոնապես ենթարկվում են կանոնավոր անասնաբուժական ստուգումների,
- գ) դրանք պետք է մի կողմից համապատասխանեցվեն Համայնքի կանոնների պահանջներին, մյուս կողմից գրանցվեն այնպես, որ ծագման կամ տարանցման հաստատությունը, արտադրման կենտրոնը կամ ձեռնարկությունը հեշտ լինի գտնել. նույնականացման կամ գրանցման ազգային

համակարգերի մասին պետք է Հանձնաժողովին տեղեկացվի սույն Հրահանգի ծանուցման ամսաթվից հետո երեք ամսվա ընթացքում:

Նախքան 1993թվականի հունվարի 1-ը՝ անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ երաշխավորելու համար, որ ներհամայնքային առեստրում կիրառելի նույնականացման եւ գրանցման համակարգերն տարածվեն իրենց տարածքում կենդանիների տեղաշարժի վրա,

դ) փոխադրման ժամանակ դրանց կից պետք է ներկայացվեն Ա հավելվածում նշված հրահանգներով նախատեսված առողջության հավաստագրեր եւ (կամ) ցանկացած այլ փաստաթուղթ, իսկ մյուս կենդանիների եւ արտադրանքի համար՝ նպատակակետ հանդիսացող անդամ պետության կանոնների համաձայն սահմանված հավաստագրեր եւ (կամ) փաստաթղթեր:

Այդ հավաստագրերը կամ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են ծագման հաստատության, արտադրման կենտրոնի կամ ձեռնարկության համար պատասխանատու անասնաբուժական պետական տեսուչի կողմից, իսկ Ա հավելվածի II-րդ հատվածի անասնաբուժական օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի դեպքում՝ իրավասու մարմնի կողմից, պետք է կցվեն կենդանուն, կենդանիներին եւ արտադրանքին՝ մինչեւ իր (իրենց) նշանակման վայրը (վայրերը),

ե) հիվանդության նկատմամբ զգայուն կենդանիները կամ այդպիսի զգայուն կենդանիներից ստացված արտադրանքը չպետք է ծագեն.

զ) հաստատություններից, արտադրման կենտրոններից կամ ձեռնարկություններից, տարածքներից կամ տարածաշրջաններից, որոնք, անհրաժեշտության դեպքում, ենթակա են տվյալ կենդանիների կամ կենդանական ծագում ունեցող տվյալ արտադրանքի համար Համայնքի կանոններին համապատասխան որոշված սահմանափակումներին՝ Գ հավելվածում նշված հիվանդության կասկածի, բռնկման կամ գոյության կամ պաշտպանիչ միջոցների կիրառման պատճառով,

ii) հաստատությունից, արտադրման կենտրոնից, ձեռնարկությունից, տարածքից կամ տարածաշրջանից, որոնք Գ հավելվածում նշված հիվանդություններից բացի այլ հիվանդության կասկածի, բռնկման կամ գոյության կամ պաշտպանիչ միջոցների կիրառման պատճառով ենթակա են պաշտոնական սահմանափակումների,

iii) այն դեպքերում, երբ դրանք նախատեսված են անդամ պետություններում տեղակայված այն հաստատությունների, արտադրման կենտրոնների կամ ձեռնարկությունների համար, որոնք ձեռք են բերել 64/432/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածով կամ Համայնքի այլ համարժեք կանոններով առկա կամ ընդունվելիք երաշխիքները, կամ այն պետության դեպքում, որի ամբողջ տարածքը կամ դրա մի մասը Համայնքի օրենսդրությամբ ճանաչվել են հիվանդությունից զերծ, այնպիսի հաստատությունից, որը չի տրամադրում Գ հավելվածում թվարկված հիվանդություններից բացի այլ հիվանդությունների հետ կապված երաշխիքները, որոնք կարող է պահանջվեն անդամ պետության կողմից,

iv) այն դեպքերում, երբ դրանք նախատեսված են այնպիսի անդամ պետության կամ դրա տարածքի մի մասի համար, որն օգտվել է 64/432/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածով նախատեսված լրացուցիչ կամ Համայնքի այլ առկա կամ ընդունվելիք կանոններով սահմանված երաշխիքներից, այնպիսի հաստատությունից, արտադրման կենտրոնից կամ ձեռնարկությունից եւ, անհրաժեշտության դեպքում, այն տարածքի մի մասից, որոնք նախատեսված լրացուցիչ երաշխիքներ չեն տրամադրում:

Նախքան հավաստագիր կամ կից փաստաթուղթ տրամադրելը՝ ծագման երկրի իրավասու մարմինն ապահովում է, որ հաստատությունները, արտադրման կենտրոնները կամ ձեռնարկությունները համապատասխանեն սույն կետով նախատեսված պահանջներին,

զ) եթե փոխադրման գործընթացը ներառում է մի քանի նշանակման վայրեր, կենդանիները եւ արտադրանքը պետք է խմբավորվեն՝ վերածվելով այնքան բեռների, որքան այն նշանակման վայրերն են, ուր դրանք նախատեսված է ուղարկել: Յուրաքանչյուր բեռին կցված պետք է լինի (դ) կետում նշված հավաստագրերը եւ (կամ) փաստաթղթերը,

է) այն դեպքում, երբ Համայնքի կանոններին համապատասխանող Ա հավելվածում նշված Հրահանգներով կարգավորվող կենդանիներն ու արտադրանքը նախատեսված են մեկ այլ անդամ պետության տարածքով երրորդ երկիր արտահանվելու համար՝ փոխադրման գործընթացը պետք է, բացի այն դեպքերից, երբ կենդանիների բարեկեցությունն ապահովվելու նպատակով խիստ անհրաժեշտությունից դրդված, պատշաճ կերպով թույլատրվել է իրավասու մարմնի կողմից, գտնվի մաքսային վերահսկողության ներքո մինչեւ Համայնքի տարածքից ելքի կետը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից կազմվելիք մանրամասն ծրագրերի, որը գործում է 18-րդ հոդվածի կամ, անհրաժեշտության դեպքում, 19-րդ հոդվածին համապատասխան:

Ավելին, Համայնքի կանոններին չհամապատասխանող կամ Բ հավելվածում նշված կենդանիների ու արտադրանքի փոխադրումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ դա բացահայտորեն թույլատրվել է տարանցման անդամ պետության իրավասու մարմնի կողմից:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ.

- 1-ին հոդվածում նշված կենդանիները, որոնք Գ հավելվածում չնշված հիվանդությունները վերացնելուն ուղղված որեւէ ներպետական ծրագրով ենթակա են մորթվելու, ինչպես նաեւ դրանցից ստացված արտադրանքը, չառաքվեն մեկ այլ անդամ պետության տարածք,
- Ա հավելվածում կամ Բ հավելվածում նշված կենդանիներն ու արտադրանքը չտեղափոխվեն մեկ այլ անդամ պետության տարածք, եթե դրանք չեն կարող շուկայահանվել իրենց սեփական տարածքում՝ Պայմանագրի 36-րդ հոդվածում պարզաբանված առողջության կամ կենդանիների առողջության պատճառներից ելնելով:

3. Չսահմանափակելով Համայնքի օրենսդրությամբ անասնաբուժական պետական տեսուչին վերապահված դիտանցման պարտականությունները՝ իրավասու մարմինն իրականացնում է ստուգումներ հաստատություններում, հաստատված շուկաներում եւ հավաքատեղիներում, արտադրման կենտրոններում կամ ձեռնարկություններում՝ համոզվելու համար, որ առեստրի համար նախատեսված այդ կենդանիներն ու արտադրանքը համապատասխանում են Համայնքի պահանջներին եւ, մասնավորապես, կատարում են 1-ին պարբերության (գ) կետով, իսկ նույնականացման առումով՝ (դ) կետով սահմանված պայմանները:

Համայնքի պահանջները չկատարելու հետ կապված կասկածի հիմքեր ունենալու դեպքում իրավասու մարմինն իրականացնում է անհրաժեշտ ստուգումները, իսկ կասկածի հաստատման դեպքում, ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ, որոնք կարող են ներառել տվյալ հաստատության, արտադրման կենտրոնի կամ ձեռնարկության մեկուսացումը:

4. 18-րդ հոդվածով կամ, անհրաժեշտության դեպքում, 19-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի կիրառման մանրամասն կանոններ, որոնք, մասնավորապես, հաշվի կառնեն կենդանիների տվյալ տեսակները:

Հոդված 4

1. Առաքման անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու, որ՝

- ա) 1-ին հոդվածում նշված ընտանի կենդանիների եւ արտադրանքի սեփականատերերը արտադրության եւ շուկայահանման բոլոր փուլերում համապատասխանեն սույն Հրահանգում նշված ազգային կամ Համայնքի առողջության կամ անասնաբուժական պահանջներին,
- բ) Ա հավելվածում նշված կենդանիներն ու արտադրանքը անասնաբուժության տեսակետից ստուգվեն առնվազն այնքան մանրակրկիտ, որքան եթե դրանք նախատեսված լինեին ազգային շուկայի համար՝ եթե Համայնքի կանոններով մասնավորապես ոչ մի այլ բան նախատեսված չէ,
- գ) կենդանիները փոխադրվեն հիգիենայի կանոնները բավարարող, փոխադրման համար պիտանի փոխադրամիջոցներով:

2. Կենդանիներին եւ արտադրանքին կից հավաստագիրը կամ փաստաթուղթը տրամադրած ծագման անդամ պետության իրավասու մարմինը՝ դրանց տրամադրման օրը եւ 20-րդ հոդվածով նախատեսված համակարգչայնացված համակարգի միջոցով նպատակակետ հանդիսացող պետության կենտրոնական իրավասու մարմինն եւ նշանակման վայրի իրավասու մարմինն հաղորդում է այնպիսի տվյալներ, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը պետք է որոշում կայացնի՝ 18-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

3. Առաքման անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից անասնաբուժական կամ անասնաբուժական ցանկացած խախտում պատժելու համար, եթե հայտնաբերվել է, որ խախտվել են Համայնքի կանոնները եւ, մասնավորապես, եթե հայտնաբերվել է, որ հավաստագրերը, փաստաթղթերը կամ նույնականացման նշանները չեն համապատասխանում կենդանիների ֆիզիկական կարգավիճակին, դրանց ծագման հաստատություններին կամ արտադրանքի փաստացի բնութագրերին:

ԳԼՈՒԽ II

Նշանակման վայր հասնելիս իրականացվող ստուգումները

Հոդված 5

1. Նպատակակետ հանդիսացող անդամ պետություններն իրականացնում են տեսչական ստուգման հետեւյալ միջոցառումները.

ա) իրավասու մարմինը կենդանիների եւ արտադրանքի նշանակման վայրում տեղում անկողմնակալ անասնաբուժական ստուգումներ իրականացնելու միջոցով կարող է բացահայտել, որ 3-րդ հոդվածի պահանջները բավարարվել են. Այն միեւնույն ժամանակ կարող է նմուշներ վերցնել:

Ավելին, ստուգումներ կարող են իրականացվել տվյալ երկրի տարածքում կենդանիների եւ արտադրանքի փոխադրման ժամանակ, եթե տարանցման կամ նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինը խախտման համար կասկած հարուցող տեղեկատվություն ունի,

բ) ավելին, եթե 1-ին հավելվածում նշված եւ մեկ այլ պետության ծագման կենդանիները նախատեսված են.

i) ինչ վերաբերում է Համայնքի կանոններով նախատեսված՝ հաստատված շուկային կամ հավաքատեղիին, ապա դրանց սեփականատերը պատասխանատվություն է կրում 3(1) հոդվածի պահանջները չբավարարող կենդանիների ընդունման համար:

Իրավասու մարմինը պետք է կենդանիներին կից ներկայացված հավաստագրերի կամ փաստաթղթերի ոչ խտրական տեսչական ստուգման միջոցով համոզվի, որ կենդանիները համապատասխանում են նշված պահանջներին.

ii) ինչ վերաբերում է անասնաբուժական պետական տեսուչի վերահսկողության ներքո գտնվող սպանդանոցին, ապա տեսուչը, մասնավորապես, հավաստագրի կամ դրան կից փաստաթղթի հիման վրա, պետք է ապահովի, որ մորթվեն միայն այն կենդանիները, որոնք չեն բավարարում 3(1) հոդվածի պահանջները:

Սպանդանոցի սեփականատերը պատասխանատու է 3 (1) հոդվածի (գ) եւ (դ) կետերի պահանջները չբավարարող կենդանիներին մորթելու համար.

iii) ինչ վերաբերում է բեռները բաժանող գրանցված դիլերի կամ մշտական վերահսկողության ներքո չգտնվող ցանկացած ձեռնարկության, ապա այդպիսի դիլերը կամ ձեռնարկությունը իրավասու

մարմնի կողմից համարվում է բեռն ստացող անձ եւ նրա նկատմամբ գործում են երկրորդ ենթապարբերությամբ սահմանված պայմանները.

iv) ինչ վերաբերում է հաստատություններին, արտադրման կենտրոններին կամ ձեռնարկություններին, ներառյալ այն ձեռնարկությունը, որտեղ բեռը մասամբ բեռնաթափվում է փոխադրման ժամանակ, ապա յուրաքանչյուր կենդանու կամ կենդանիների խմբի, նախքան դրանք կհասնեն այս փաստաթղթում նշված՝ բեռն ստացող անձին, պետք է, 3-րդ հոդվածի համաձայն, կցված լինի առողջության հավաստագրի բնօրինակ կամ փաստաթուղթ՝

Առաջին ենթապարբերության (iii) եւ (iv) կետերում նշված՝ բեռն ստացող անձինք պետք է, նախքան բեռի բաժանումը կամ հետագա շուկայահանումը, ստուգեն 3 (1) հոդվածի (գ) եւ (դ) կետերում նշված նույնականացման նշանների, հավաստագրերի կամ փաստաթղթերի առկայությունը, ծանուցեն իրավասու մարմնին ցանկացած խախտման կամ անկանոնության մասին եւ, վերջինիս դեպքում, մեկուսացնեն այդ կենդանիներին՝ մինչեւ իրավասու մարմինը դրանց վերաբերյալ որոշում կայացնի:

Առաջին ենթապարբերության (iii) եւ (iv) կետերում նշված՝ բեռն ստացող անձանց կողմից տրամադրման ենթակա երաշխիքները շարադրվում են իրավասու մարմնի հետ 12-րդ հոդվածով սահմանված՝ նախնական գրանցման ժամանակ ստորագրված համաձայնագրում: Իրավասու մարմինն իրականացնում է պատահական ստուգումներ՝ հաստատելու համար դրանց համապատասխանությունն այդ երաշխիքների հետ :

Այս կետն անհրաժեշտ փոփոխությունների ենթարկվելով՝ կիրառվում է 1-ին հոդվածով սահմանված բեռն ստացող անձանց նկատմամբ:

2. Հոդված 3 (1)-ի (դ)-կետով նախատեսված հավաստագրում կամ փաստաթղթում նշված՝ բեռն ստացող բոլոր անձինք.

ա) պետք է, նպատակակետ հանդիսացող անդամ պետության պահանջով եւ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է 1-ին պարբերության մեջ նշված ստուգումները իրականացնելու համար, նախօրոք զեկուցեն այլ անդամ պետությունից կենդանիների եւ արտադրանքի ժամանման մասին՝ մասնավորապես նշելով բեռի բնույթը եւ ժամանելու համար սպասվող ամսաթիվը:

Այնուամենայնիվ, ծանուցման ժամկետը, որպես ընդհանուր կանոն, չի կարող գերազանցել մեկ օրը, այնուհանդերձ, բացառիկ դեպքերում, անդամ պետությունները կարող են պահանջել նախնական ծանուցման երկօրյա ժամկետ:

Այս ծանուցումը չի պահանջվում 90/427/ԵՏՀ հրահանգով նախատեսված՝ նույնականացման փաստաթուղթ ունեցող գրանցված ձիերի համար,

բ) իրավասու մարմնի կողմից սահմանված՝ վեց ամսից ոչ պակաս ժամկետով պահպանում է առողջապահական հավաստագրերը կամ 3-րդ հոդվածում նշված փաստաթղթերը՝ իրավասու մարմնի պահանջով դրանք վերջինիս ներկայացնելու նպատակով:

3. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 18-րդ հոդվածով կամ, անհրաժեշտության դեպքում, 19-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 6

1. Եթե Համայնքի կանոններով կամ այն տարածքներում, որոնք դեռ չեն ներդաշնակեցվել, Պայմանագրի ընդհանուր օրենքներին համապատասխանող ազգային դրույթներով պահանջվում է, որ սահմանվի կենդանի կենդանիների կարանտին, վերջինս սովորաբար տեղի է ունենում նշանակման վայրի հաստատությունում:

2. Կարանտին կայան կարող է օգտագործվել այն դեպքում, երբ դրա օգտագործումը արդարացված է անասնաբուժական տեսանկյունից: Այդպիսի կայանը համարվում է բեռի նշանակման վայրը: Շահագրգիռ անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին այդպիսի գործողություններ իրականացնելու հիմքերի մասին:

3. Կարանտինի եւ վերջինիս գտնվելու վայրի հետ կապված պարտավորությունները շարադրվում են 21-րդ հոդվածի երկրորդ ենթապարբերության մեջ նշված անասնաբուժական պահանջներում:

Հոդված 7

1. Անդամ պետություններն ապահովում են, որ այն վայրերում իրականացված ստուգումների ժամանակ, որտեղից էլ հավելվածում նշված երրորդ երկրների կենդանիները եւ արտադրանքը կարող են տեղափոխվել 90/675/ԵՏՀ հրահանգի էլ հավելվածում սահմանված տարածքներ,ինչպես օրինակ՝ երրորդ երկրների նավահանգիստներ, օդանավակայաններ եւ սահմանային հսկողության անցակետեր, ձեռնարկվեն հետեւյալ միջոցառումները.

- ա) ստուգվեն կենդանիներին եւ արտադրանքին կից ներկայացված հավաստագրերը կամ փաստաթղթերը.
- բ) Համայնքի կենդանիները եւ արտադրանքը ենթակա լինեն 5-րդ հոդվածում սահմանված վերահսկման կանոններին.
- գ) երրորդ երկրներից ստացված արտադրանքը ենթակա լինեն 90/675/ԵՏՀ հրահանգով սահմանված կանոններին,
- դ) երրորդ երկրներից ստացված կենդանիները ենթակա լինեն 91/496/ԵՏՀ հրահանգում սահմանված կանոններին:

2. Այնուամենայնիվ, 1992թ.-ի հուլիսի 1-ից սկսած 2 եւ 1-ին պարբերությունից շեղում կատարելով, բոլոր կենդանիները կամ արտադրանքը, որոնք փոխադրվել են այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք կանոնավոր եւ անմիջական կապ են ապահովում համայնքի երկու աշխարհագրական կետերի միջեւ, ենթակա են 5-րդ հոդվածով նախատեսված վերահսկման կանոններին:

□M8 □

▼B

Հոդված 8

1. Եթե բեռի նշանակման վայրում կամ փոխադրման ընթացքում իրականացվող ստուգման ժամանակ անդամ պետության իրավասու մարմինները հաստատում են, որ

ա) Հանձնաժողովի 90/134/ԵՏՀ⁵ որոշմամբ վերջին անգամ փոփոխված 82/894/ԵՏՀ⁶ Հրահանգում նշված հիվանդության հարուցչի, զոոնոզի, այլ հիվանդության կամ այլ պատճառի առկայություն⁷, որը կարող է լուրջ վտանգ ներկայացնել կենդանիների կամ մարդկանց համար⁸, կամ այդ արտադրանքը ժամանել են կենդանիների համաճարակային հիվանդություններով վարակված տարածաշրջանից, իրավասու մարմինների հրամանով կենդանին կամ կենդանիների բեռը կարող է պահվել կարանտին հսկողության տակ մոտակա կարանտին կայանում կամ մորթվել եւ (կամ) ոչնչացվել:

Առաջին ենթապարբերությամբ նախատեսված միջոցառումների հետ կապված ծախսերը կրում է բեռն ուղարկողը կամ նրա ներկայացուցիչը կամ արտադրանքի կամ կենդանիների համար պատասխանատու անձը:

Նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինն անմիջապես գրավոր, ամենահարմար միջոցներով, տեղեկացնում է մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ Հանձնաժողովին իր բացահայտումների, կայացրած որոշումների եւ այդպիսի որոշումներ կայացնելու պատճառների մասին:

Կարող են կիրառվել 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանիչ միջոցները:

Անդամ պետության պահանջով եւ 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, Հանձնաժողովը կարող է, ավելին, ընդունել ցանկացած միջոց, որն անհրաժեշտ է անդամ պետությունների կողմից Համայնքի կանոններով չկարգավորվող իրավիճակների հետ գործ ունենալու հետ կապված համաձայնեցված մոտեցման հասնելու համար,

բ) որ, չսահմանափակելով (ա) կետի դրույթները, կենդանիներն ու արտադրանքը չեն բավարարում Համայնքի հրահանգներով սահմանված պայմանները կամ, եթե անդամ պետությունը ձեռք է բերում 64/432/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները կամ համայնքի

⁵ՊՏ թիվ L 76, 22: 3. 1990թ., էջ 23:

⁶ (5) ՊՏ թիվ L 378, 31: 12. 1982թ., էջ 58:

⁷ (5) ՊՏ թիվ L 378, 31: 12. 1982թ., էջ 58:

⁸ՊՏ թիվ L 76, 22: 3. 1990թ., էջ 23:

համարժեք կանոնները, որոնք ընդունվել կամ ընդունվելու են կենդանիների առողջությանը վերաբերվող ազգային օրենքներով, նրանք կարող են, պայմանով, որ հանրային կամ կենդանիների առողջության նկատառումները թույլ տան այդպես գործելու, ուղարկողին կամ նրա ներկայացուցչին առաջարկել հետեւյալ տարբերակները.

- մնացորդների առկայության դեպքում կենդանիները կամ արտադրանքը վերահսկողության տակ պահելը, այնքան ժամանակ, մինչեւ կհաստատվի դրանց համապատասխանությունը կանոններին, իսկ անհամապատասխանության դեպքում՝ Համայնքի օրենսդրությամբ նախատեսված միջոցների կիրառումը,
- կենդանիներին մորթելը կամ արտադրանքի ոչնչացումը,
- կենդանին կամ բեռը վերադարձնելը՝ առաքման անդամ պետության իրավասու մարմնի թույլտվությամբ եւ տարանցման անդամ պետությանը (պետություններին) նախօրոք դրա մասին ծանուցելով:

Այնուամենայնիվ, եթե բացահայտվում է, որ հավաստագիրը կամ փաստաթղթերը պարունակում են խախտումներ, սեփականատիրոջը կամ նրա ներկայացուցչին պետք է տրվի արտոնյալ ժամանակաշրջան՝ նախքան այս վերջին հնարավորության օգնությանը դիմելը:

2. 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը կազմում է 1-ին պարբերության մեջ նշված հիվանդությունների ցուցակը եւ սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները:

Հոդված 9

1. 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերում նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինն անհապաղ տեղեկացնում է դրանց մասին առաքման անդամ պետության իրավասու մարմիններին: Վերջիններս ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները եւ տեղեկացնում առաջին անդամ պետությանը անցկացվող ստուգումների բնույթի, ընդունված որոշումների եւ նման որոշումներ կայացնելու պատճառների մասին:

Եթե նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինը մտավախություն ունի, որ այդ միջոցներն անհամապատասխան են իրավիճակին, երկու անդամ պետությունների իրավասու մարմինները միասին փնտրում են իրավիճակը շտկելու ուղիներ եւ միջոցներ. համապատասխան դեպքում, այդ միջոցները կարող են ներառել տեղում իրականացվող տեսչական ստուգումները:

Եթե 8-րդ հոդվածով նախատեսված ստուգումներով բացահայտվում են կրկնվող խախտումներ, ապա նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինը դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին:

Նշանակման անդամ պետության իրավասու մարմնի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ, եւ հաշվի առնելով հաստատված խախտումների բնույթը, Հանձնաժողովը կարող է՝

- տվյալ վայր ուղարկել տեսչության ստուգողներ՝ ազգային իրավասու մարմինների հետ համագործակցելու համար,
- հանձնարարել այն անասնաբուժական պետական տեսուչին, որի անունը նշված է անդամ պետությունների առաջարկով Հանձնաժողովի կողմից կազմված ցուցակում, եւ ում ընդունում են համապատասխան տարբեր կողմերը, տեղում ստուգելու տվյալ հաստատության փաստերը,
- պահանջել իրավասու մարմնից ավելացնել հաստատությունում, արտադրման կենտրոնում, ձեռնարկությունում, հաստատված շուկայում, հավաքատեղի կենտրոնում կամ ծագման տարածաշրջանում ստուգումների անցկացման հաճախականությունը:

Այն անդամ պետություններին տեղեկացնում է իր կողմից բացահայտված փաստերի մասին:

Նախքան Հանձնաժողովի կողմից բացահայտված փաստերի մասին տեղեկանալը՝ առաքման անդամ պետությունը պետք է նպատակակետ հանդիսացող անդամ պետության պահանջով ավելացնի տվյալ հաստատությունից, արտադրման կենտրոնից, ձեռնարկությունից, հաստատված շուկայից, հավաքատեղի կենտրոնից կամ տարածաշրջանից ծագող կենդանիների եւ արտադրանքի նկատմամբ ստուգումների հաճախականությունը եւ, հանրային կամ կենդանիների առողջության վտանգի լուրջ հիմքերի առկայության դեպքում՝ կասեցնի ցանկացած հավաստագրի կամ արտադրանքի տեղաշարժի վերաբերյալ փաստաթղթերի տրամադրումը:

Նպատակակետ հանդիսացող անդամ պետությունը կարող է իր հերթին ավելացնել այդ նույն հաստատությունից, արտադրման կենտրոնից, ձեռնարկությունից, հաստատված շուկայից, հավաքատեղի կենտրոնից կամ տարածաշրջանից բերված կենդանիների նկատմամբ ստուգումների հաճախականությունը:

Տվյալ երկու անդամ պետություններից մեկի պահանջով, եթե խախտումները հաստատվել են փորձագետի եզրակացությամբ, ապա Հանձնաժողովը պետք է 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, ձեռնարկի համապատասխան միջոցներ, որոնք կարող են հասնել ընդհուպ մինչև անդամ պետություններին թույլատրելը ժամանակավորապես արգելել այդ հաստատությունից, արտադրման կենտրոնից, ձեռնարկությունից, հաստատված շուկայից, հավաքատեղի կենտրոնից կամ տարածաշրջանից բերվող կենդանիների ու արտադրանքի ներմուծումը իրենց տարածք: Այս միջոցները պետք է հաստատվեն կամ վերանայվեն առաջին իսկ հնարավորության դեպքում 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

2. Չորրորդ ենթապարբերությամբ նախատեսված դեպքերից բացի՝ սույն Հրահանգը չի տարածվում իրավասու մարմինների որոշումների դեմ անդամ պետությունների գործող օրենքներով սահմանված բողոքարկման իրավունքների վրա:

Բեռնառաքողին կամ նրա ներկայացուցչին եւ առաքման անդամ պետության իրավասու մարմինն տեղեկացվում է նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմնի կողմից ընդունված որոշումների եւ նման որոշումներ ընդունելու պատճառների մասին:

Բեռնառաքողի կամ նրա ներկայացուցչի կողմից պահանջը ներկայացնելու դեպքում, վերոնշյալ որոշումները եւ դրանց ընդունման պատճառները նրան գրավոր են փոխանցվում՝ նշելով մանրամասներ բողոքարկելու իրավունքների եւ դրանց համար կիրառելի ընթացակարգերի ու ժամանակային սահմանափակումների մասին, որոնցից նա կարող է օգտվել՝ անդամ պետությունում գործող իրավունքի համաձայն:

Այնուամենայնիվ, վեճի առաջացման դեպքում, երկու համապատասխան կողմերը կարող են, համաձայնության գալով միմյանց հետ, առավելագույնը մեկ ամսվա ընթացքում ներկայացնել վեճի առարկան այն փորձագետի գնահատմանը, որի անունը նշված է Համայնքի՝ Հանձնաժողովի կողմից կազմված փորձագետների ցուցակում. փորձագետի խորհրդատվությանը դիմելու ծախսը հոգում է Համայնքը:

Այդ փորձագետները տալիս են իրենց եզրակացությունները 72 ժամից ոչ ավելի ժամանակահատվածում կամ ցանկացած վերլուծության արդյունքներն ստանալուց հետո: Կողմերը պետք է կատարեն փորձագետի եզրակացության պահանջները՝ պատշաճորեն հաշվի առնելով Համայնքի անասնաբուժությանն առնչվող օրենսդրությունը:

3. Բեռը հետ վերադարձնելու, կենդանիներին պահելու կամ մեկուսացնելու, կամ անհրաժեշտության դեպքում, մորթելու կամ ոչնչացնելու հետ կապված ծախսերը կրում է բեռնառաքողը, նրա ներկայացուցիչը կամ կենդանիների կամ արտադրանքի համար պատասխանատու անձը:

4. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոններն ընդունվում են 18-րդ, իսկ հարկ եղած դեպքում՝ 19-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ III

Ընդհանուր դրույթներ

Հոդված 10

1. Յուրաքանչյուր անդամ պետություն անմիջապես տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին իր տարածքում 82/894/ԵՏՀ հրահանգում նշված հիվանդությունների տարածումից բացի այլ ցանկացած զոոնոզ վարակիչ հիվանդությունների, այլ հիվանդությունների տարածման, կամ ցանկացած այլ դեպքի մասին, որը կարող է լուրջ վտանգ լինել կենդանիների կամ մարդկանց համար:

Առաքման անդամ պետությունն անհապաղ կիրառում է համայնքի կանոններով նախատեսված վերահսկողական կամ կանխարգելիչ միջոցները, մասնավորապես՝ այդ կանոններով նախատեսված բուժերային գոտիների սահմանումը, կամ ընդունում է վերջինիս կողմից պատշաճ համարվող ցանկացած այլ միջոց:

Նպատակակետ հանդիսացող կամ տարանցման անդամ պետությունը, որը 5-րդ հոդվածով սահմանված ստուգման ընթացքում բացահայտել է առաջին ենթապարբերության մեջ նշված հիվանդություններից կամ պատճառներից որեւէ մեկի առկայությունը կարող է,

անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել Համայնքի կանոններով նախատեսված կանխարգելիչ միջոցառումները՝ ներառյալ կենդանիներին կարանտին հսկողության տակ պահելը:

Հաշվի առնելով 4-րդ պարբերության համաձայն ձեռնարկվելիք միջոցները՝ նպատակակետ հանդիսացող անդամ պետությունը կարող է հանրային կամ կենդանիների առողջության լուրջ հիմքերի առկայության դեպքում, տվյալ հաստատության, արտադրման կենտրոնի կամ ձեռնարկության նկատմամբ իսկ, կենդանիների համաճարակային հիվանդության դեպքում, Համայնքի կանոններով նախատեսված բուժերային գոտու հետ կապված ձեռնարկել միջանկյալ պաշտպանիչ միջոցառումներ:

Անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցների մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների:

2. Առաջին պարբերության առաջին ենթապարբերությունում նշված անդամ պետության խնդրանքով կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, Հանձնաժողովի մեկ կամ մի քանի ներկայացուցիչները, համագործակցելով իրավասու մարմինների հետ, կարող են անմիջապես մեկնել համապատասխան վայր՝ ստուգելու, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել եւ այդ միջոցների մասին եզրակացություն կազմել:

3. Եթե Հանձնաժողովին չեն տեղեկացրել ձեռնարկվող միջոցների մասին կամ եթե այն այդ միջոցները համարում է անբավարար, ապա վերջինս կարող է, համագործակցելով տվյալ անդամ պետության հետ եւ, նախքան Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի հետ հանդիպումը, համաճարակային հիվանդությամբ վարակված տարածաշրջանից կամ տվյալ հաստատությունից, արտադրման կենտրոնից կամ ձեռնարկությունից բերված կենդանիների կամ արտադրանքի նկատմամբ միջանկյալ պաշտպանիչ միջոցներ ձեռնարկել: Այս միջոցների մասին հնարավորինս շուտ տեղյակ կպահվի Անասնաբուժության գծով մշտական կոմիտեն՝ 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, դրանք հաստատելու, փոփոխելու կամ չեղյալ համարելու համար:

4. Հանձնաժողովը բոլոր դեպքերի համար, առաջին իսկ հնարավորության պարագայում, Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակներում վերանայում է տիրող իրավիճակը: Այն ընդունում է անհրաժեշտ միջոցներ՝ 1-ին հոդվածում նշված կենդանիների եւ արտադրանքի եւ, եթե իրավիճակն այդպես է պահանջում, այդ կենդանիներից ստացված արտադրանքի համար՝ 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

Հանձնաժողովն իրականացնում է իրավիճակի դիտանցում եւ, միեւնույն ընթացակարգով, փոփոխում կամ չեղյալ է համարում ընդունված որոշումները՝ կախված իրավիճակի զարգացումներից:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները եւ, մասնավորապես, զոռնոզի կամ այն պատճառների ցանկը, որը կարող է լուրջ վտանգ ներկայացնել մարդու կյանքի համար, ընդունվում են 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 11

Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է անասնաբուժական ստուգումներն իրականացնելու համար պատասխանատու անասնաբուժական տեսչություն կամ տեսչություններ, որոնք կհամագործակցեն այլ անդամ պետությունների տեսչությունների հետ:

Հոդված 12

Անդամ պետությունները ապահովում են, որ սույն հոդվածով կարգավորվող կենդանիների եւ (կամ) արտադրանքի ներհամայնքային առետրի մեջ ընդգրկված բոլոր դիլերներից պահանջվի.

ա) նախօրոք գրանցվել պաշտոնական գրանցամատյանում՝ իրավասու մարմնի պահանջով,

բ) գրանցել առաքումները, իսկ, 5 (1) (բ) (iii) հոդվածում նշված բեռն ստացող անձանց դեպքում՝ կենդանիների եւ արտադրանքի հետագա նշանակման վայրերը:

Վերոնշյալ գրառումները պահվում են իրավասու ազգային մարմնի կողմից որոշվող ժամկետով, այնպես որ հնարավոր լինի դրանք ներկայացնել իրավասու մարմնին իր պահանջով :

Հոդված 13

Անդամ պետությունները նաեւ ապահովում են, որ իրենց անասնաբուժական տեսչությունների պաշտոնյաները, համապատասխան դեպքում այդ նպատակով լիազորված այլ տեսչությունների պաշտոնյաների հետ համագործակցելով, մասնավորապես, ընդունակ լինեն՝

— իրականացնել հաստատությունների, սարքավորումների, փոխադրամիջոցների եւ կենդանիների նշագրման ու նույնականացման գործընթացների տեսչական ստուգումները,

— Ա հավելվածում թվարկված արտադրանքի հետ կապված ստուգել, որ անձնակազմը համապատասխանում էի այդ հավելվածում նշված տեքստերի պահանջներին:

— նմուշներ վերցնել.

—

- կենդանիներից, որոնք պահվում են վաճառքի, շուկայահանման կամ տեղափոխման նպատակով,
- արտադրանքից, որոնք պահվում են պահեստավորման կամ վաճառքի, ինչպես նաեւ շուկայահանման կամ տեղափոխման նպատակով,

-զննել սույն Հրահանգով ձեռնարկվող միջոցներից հետո իրականացվող ստուգումների մասին փաստաթղթային կամ համակարգչային նյութերը:

Անդամ պետությունները պետք է ստուգման ենթարկվող հաստատություններից, արտադրման կենտրոններից կամ ձեռնարկություններից պահանջեն ապահովել իրենց հետ անհրաժեշտ համագործակցությունը՝ վերոնշյալ առաջադրանքները կատարելու համար:

Հոդված 14

1. 89/662/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված⁹ թիվ 64/432/ԵՏՀ հրահանգում¹⁰, սույնով կատարվում են հետեւյալ փոփոխությունները.

բ) 6-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 6

⁹ՊՏ թիվ 121, 29: 7. 1964թ., էջ 64:

¹⁰ՊՏ թիվ L 395, 30: 12. 1989թ., էջ 13:

Սպանդի համար նախատեսված կենդանիները, որոնք նպատակակետ հանդիսացող երկիր ժամանելուց հետո ուղղակիորեն կամ հաստատված շուկայի կամ հավաքատեղիի միջոցով ուղարկվում են սպանդանոց, պետք է այնտեղ մորթվեն հնարավորինս արագ՝ համաձայն կենդանիների առողջության պահանջների:

Սպանդի համար նախատեսված կենդանիները, որոնք նպատակակետ հանդիսացող երկիր ժամանելուց հետո տարվել են սպանդանոցին կից շուկա, որի կանոններով բոլոր կենդանիները շուկայից հետո մասնավորապես կարող են դուրս բերվել միայն իրավասու մարմնի կողմից այս նպատակի համար հաստատված սպանդանոց, պետք է մորթվեն սպանդանոցում շուկա ժամանելուց հետո ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում:

Նպատակակետ հանդիսացող պետության իրավասու մարմինը կարող է՝ ելնելով կենդանիների առողջության նկատառումներից, նշանակել այն սպանդանոցը, որտեղ կենդանիները պետք է ուղարկվեն»:

բ) սույնով ուժը կորցրած են ճանաչվում 7(3) հոդվածը եւ 8 (2) հոդվածի առաջին ենթապարբերությունը:

գ) 9(գ) եւ 10(գ) կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9

1.1. Այն անդամ պետությունը, որն իր ամբողջ տարածքի կամ դրա մի մասի համար ունի հսկողության ազգային ծրագիր՝ Ե հավելվածում նշված հավաքարակիչ հիվանդություններից որեւէ մեկի կապակցությամբ, կարող է Հանձնաժողով ներկայացնել այդ ծրագիրը՝ ընդգծելով, մասնավորապես՝

— անդամ պետությունում հիվանդության տարածվածությունը,

- ծրագիրն իրականացնելու պատճառները՝ հաշվի առնելով հիվանդության կարեւորությունը եւ ծրագրից ստացվելիք հնարավոր օգուտի հարաբերակցությունը կատարվելիք ծախսերին,

- այն աշխարհագրական տարածքը, որտեղ իրականացվելու է ծրագիրը,

Կենդանիների համար նախատեսված հաստատությունների նկատմամբ կիրառվելիք կարգավիճակի կատեգորիաները, ստանդարտները, որոնք պետք է ապահովվել յուրաքանչյուր նման կատեգորիայում եւ օգտագործվելիք փորձաստուգումների անցկացման ընթացակարգերը,

—ծրագրի դիտանցման ընթացակարգերը,

- գործողությունները, որոնք պետք է իրականացնել, եթե որեւէ պատճառով ձեռնարկությունը կորցնում է իր կարգավիճակը,
- միջոցները, որոնք պետք է ձեռնարկել, եթե ծրագրի դրույթներին համապատասխան իրականացված ստուգումների արդյունքները դրական են:

2. Հանձնաժողովն ուսումնասիրում է անդամ պետությունների կողմից ներկայացված ծրագրերը: 1-ին պարբերության մեջ նշված ծրագրերը կարող են հաստատվել 1-ին պարբերությամբ սահմանվող չափանիշների համաձայն, 12-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան: Նույն ընթացակարգի համաձայն՝ ընդհանուր կամ մասնավոր այն հավելյալ երաշխիքները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ ներհամայնքային առեստում, սահմանվում են նույն ժամանակահատվածում կամ ծրագիրը հաստատվելուց հետո ամենաուշը երեք ամսվա ընթացքում: Այս երաշխիքները չպետք է գերազանցեն անդամ պետության կողմից ազգային մակարդակով իրականացվող երաշխիքները:

3. Անդամ պետությունների կողմից ներկայացված ծրագրերը կարող են փոփոխվել կամ լրացվել 12-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն: Արդեն հաստատված ծրագրերի փոփոխությունները կամ լրացումները կամ 2-րդ պարբերության համաձայն որոշված երաշխիքները կարող են հաստատվել նույն ընթացակարգով:

«Հոդված 10

1.1. Եթե անդամ պետությունը համարում է, որ իր տարածքը կամ իր տարածքի մի մասը զերծ է այն հիվանդություններից, որոնց կարող են ենթարկվել խոշոր եղջերավոր անասունները եւ խոզերը, այն Հանձնաժողով է ներկայացնում համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, որոնցում, մասնավորապես, նշված է.

—հիվանդության բնույթը եւ իր տարածքում այդ հիվանդության դեպքերի պատմությունը,

հետազոտական փորձաստուգումների արդյունքները՝ հիմնված շիճուկաբանական, միկրոկենսաբանական, պաթոլոգիական կամ համաճարակաբանական ուսումնասիրությունների վրա եւ այն փաստի, որ տվյալ հիվանդության մասին պետք է օրենքով ծանուցվի իրավասու մարմիններին,

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացվել է հսկողությունը,

հարկ եղած դեպքում՝ այն աշխարհագրական տարածքը եւ այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ հիվանդության դեմ պատվաստումն արգելվել է,

-հիվանդության բացակայությունը հավաստող միջոցները:

2. Հանձնաժողովն ուսումնասիրում է անդամ պետությունների կողմից ներկայացված փաստաթղթերը: Ընդհանուր կամ մասնավոր այն հավելյալ երաշխիքները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ ներհամայնքային առեստրում, պետք է սահմանվեն 12-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Այս երաշխիքները չպետք է գերազանցեն անդամ պետության կողմից ազգային մակարդակով իրականացվող երաշխիքները: Եթե հիմնավորումը ներկայացվել է նախքան 1991թվականի հուլիսի 1-ը, լրացուցիչ երաշխիքների մասին որոշումները կայացվում են նախքան 1992թվականի հունվարի 1-ը:

3. Շահագրգիռ անդամ պետությունը պետք է ծանուցի Հանձնաժողովին 1-ին պարբերությամբ սահմանված հիվանդությանը վերաբերող տվյալների ցանկացած փոփոխության մասին: Այս ծանուցման լույսի ներքո, 2-րդ պարբերությանը համապատասխան սահմանված երաշխիքները կարող են փոփոխվել կամ դադարեցվել՝ 24(12) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

2. 5 (2) հոդվածի 2-րդից 5-րդ ենթապարբերությունները եւ 88/407/ԵՏՀ հրահանգի 7-րդ եւ 15-րդ հոդվածները¹¹ սույնով ուժը կորցրած են ճանաչվում:

3. 5 (2) հոդվածի 2-րդից 4-րդ ենթապարբերությունները եւ 89/556/ԵՏՀ հրահանգի 14-րդ հոդվածը¹² սույնով ուժը կորցրած են ճանաչվում:

4. 89/227/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված 72/462/ԵՏՀ հրահանգի¹³ 13-րդ հոդվածի առաջին ենթապարբերության հինգերորդ տողում¹⁴ «երեքը» փոխարինվել է «հինգով»:

¹¹ՊՏ թիվ L 134, 22: 7. 1998թ., էջ 10:

¹²ՊՏ թիվ L 302, 19: 10. 1989թ., էջ 1:

¹³ՊՏ թիվ L 302, 31 12. 1972թ., էջ 28:

¹⁴ՊՏ թիվ L 93, 06.04.1989թ., էջ 25:

Հոդված 15

1. 64/432/ԵՏՀ եւ 89/556/ԵՏՀ հրահանգներին ավելացվում է հետեւյալ հոդվածը՝

«Հոդված 14

Ներքին շուկայի ձեւավորման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով որոշ կենդանի կենդանիների եւ արտադրանքի՝ ներհամայնքային առետրում անասնաբուժական եւ անասնաբուժական ստուգումների վերաբերյալ՝ Խորհրդի 1990թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգով սահմանված կանոնները¹⁵, մասնավորապես, կիրառվում են ծագման վայրում ստուգումների, նպատակակետ հանդիսացող անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվելիք պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»:

2. 88/407/ԵՏՀ հրահանգին ավելացվել է հետեւյալ հոդվածը՝

«Հոդված 15

Ներքին շուկայի ձեւավորման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով որոշ կենդանի կենդանիների եւ արտադրանքի՝ ներհամայնքային առետրում անասնաբուժական եւ անասնաբուժական ստուգումների վերաբերյալ՝ Խորհրդի 1990թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգով սահմանված կանոնները¹⁶ մասնավորապես, կիրառվում են ծագման վայրում ստուգումների, նպատակակետ հանդիսացող անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, այդ ստուգումներից հետո նպատակակետ հանդիսացող անդամ պետության կողմից ձեռնարկվող հետագա գործողությունների, ինչպես նաեւ ձեռնարկվելիք պաշտպանիչ միջոցների նկատմամբ:

3. 90/426/ԵՏՀ հրահանգի (9) հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9

¹⁵ՊՏ թիվ L 224, 18.08.1990թ., էջ 29:

¹⁶ՊՏ թիվ L 224, 18. 08. 1990թ., էջ 29:

Ներքին շուկայի ձեւավորման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով որոշ կենդանի կենդանիների եւ արտադրանքի ներհամայնքային առետրում անասնաբուժական ու անասնաբուժական ստուգումների վերաբերյալ Խորհրդի 1990թվականի հունիսի 26-ի թիվ 90/425/ԵՏՀ հրահանգով սահմանված կանոնները¹⁷, մասնավորապես, կիրառվում են ծագման վայրում ստուգումների, նպատակակետ հանդիսացող անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվելիք պաշտպանիչ միջոցների նկատմամբ:

Հոդված 16

18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է փոփոխել Գ հավելվածում նշված հիվանդությունների ցանկը:

Հոդված 17

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում Խորհրդի 68/361/ԵՏՀ որոշմամբ նշանակված Անասնաբուժության գծով մշտական կոմիտեն¹⁸ որոշումներ է կայացնում 89/662/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում սահմանված կանոններին համապատասխան:

Հոդված 18

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում Անասնաբուժության գծով մշտական կոմիտեն որոշումներ է կայացնում՝ համաձայն 89/662/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում շարադրված կանոնների:

¹⁷ՊՏ թիվ L 224, 18.08.1990թ., էջ 29:

¹⁸ՊՏ թիվ L 255, 18.10.1968թ., էջ 23:

Հոդված 19

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում 77/505ԵՏՀ որոշմամբ նշանակված Անասնաբուծության գծով մշտական կոմիտեն¹⁹ որոշումներ է կայացնում 88/661/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածով սահմանված կանոններին համապատասխան²⁰:

ԳԼՈՒԽ IV

Վերջնական եւ անցումային դրույթներ

Հոդված 20

1. Հանձնաժողովը, 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, ներդրում է անասնաբուժական մարմինների միջեւ կապի համակարգչայնացված համակարգ, մասնավորապես, նպատակ ունենալով հեշտացնելու կենդանիներին եւ կենդանական ծագում ունեցող արտադրանքին կից ներկայացված առողջության հավաստագիրը կամ փաստաթուղթը տրամադրած տարածաշրջանների իրավասու մարմինների եւ նպատակակետ հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումը:

2. 90/424/ԵՏՀ որոշման 37-րդ հոդվածով նախատեսված եւ սույն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ Համայնքի ֆինանսական օժանդակության համար ընթացակարգերն ընդունվում են նշված որոշման 42-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

3. 18-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովն ընդունում է սույն հոդվածի կիրառման ընթացակարգը եւ, մասնավորապես, տվյալների փոխանակման ու տվյալների փոխանակման անվտանգության կանոնների համապատասխան չափանիշները:

¹⁹ՊՏ թիվ L 206, 12. 8.1977թ., էջ 11:

²⁰ՊՏ թիվ L 382, 31.12.1998թ., էջ 16:

Հոդված 21

ՈՍԿ ————— Ակնկալելով Համայնքի կանոնների ընդունումը եւ չսահմանափակվելով խմբաքանակների նույնականացման համար սահմանված ցանկացած ազգային օրենքների առկայությունը՝ Բ հավելվածում թվարկված կենդանիների եւ արտադրանքի առետուրը ենթակա է սույն Հրահանգով սահմանված վերահսկման կանոններին՝ մասնավորապես այն կանոններին, որոնք նշված են 3 (1) (ա) հոդվածի նախադասության երկրորդ մասում:

▼Մ8

Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին առաջին ենթապարբերությունում նշված կենդանիների եւ արտադրանքի առետուրում կիրառվող պայմանների ու ընթացակարգերի մասին:

▼B

17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են երկրորդ ենթապարբերության մեջ նշված պայմանների մասին հաշվետվությունների համակարգչայնացման համար:

Ա հավելվածում նշված կենդանիների եւ արտադրանքի համար նախատեսված վերահսկման պայմանները տարածվում են այն կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող արտադրանքի վրա, որոնք սույն փաստաթղթում նշված՝ առետուրը ղեկավարող ներդաշնակեցված կանոնների ընդունման ժամանակ դեռ չեն կարգավորվում սույն Հավելվածով: ՈՍԿ —————

▼Մ8

Հոդված 22

1. Օգտագործելով ներդաշնակեցված մոդելը՝ անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում համապատասխան տեղեկատվություն՝ սույն Հրահանգի համաձայն իրականացվող ստուգումների վերաբերյալ:

2. Հանձնաժողովն ուսումնասիրում է 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում: Այն կարող է ընդունել անհրաժեշտ միջոցներ՝ 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

3. Սույն հոդվածի կիրառման, մասնավորապես՝ տեղեկատվության փոխանակման հաճախականության, օգտագործվելիք մոդելի եւ տեղեկատվության տեսակի համար պահանջվող մանրամասն կանոններն ընդունվում են 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

▼M6

Հոդված 23

Խորհուրդը վերաքննում է հետեւյալը՝ հիմնվելով Հանձնաժողովի հաշվետվության եւ դրանց կից հնարավոր առաջարկների վրա, որոնց մասին Խորհուրդը որոշում կկայացնի որակյալ մեծամասնությամբ՝

- նախքան 1993 թվականի հունվարի 1-ը՝ 10-րդ հոդվածի եւ 5 (2) (ա) հոդվածի դրույթները.
- նախքան 1996 թվականի հունվարի 1-ը՝ այլ դրույթներ:

▼M8

Հոդված 24

Մինչեւ 1992 թվականի դեկտեմբերի 31-ը սույն Հրահանգով սահմանված ստուգման պայմանավորվածությունների աստիճանական իրականացումը թույլատրելու համար անդամ պետությունները կարող են իրականացնել.

- փաստաթղթային ստուգումներ՝ Ա եւ Բ հավելվածներով կարգավորվող կամ երրորդ երկրներից ներմուծված կենդանիների եւ արտադրանքի փոխադրման ժամանակ
- անկողմնակալ խտրական բնույթի անասնաբուժական ստուգումներ տեղում՝ Բ հավելվածով կարգավորվող կենդանիների եւ արտադրանքի փոխադրման ժամանակ,

▼M2 _____

▼B

Հոդված 26

Անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը, որոնք անհրաժեշտ են ենթարկվելու.

- i) սույն Հրահանգի 10-րդ հոդվածին եւ 89/662/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածին՝ սույն Հրահանգի ծանուցման օրվանից երկու ամիս հետո,

▼M6

- ii) սույն Հրահանգի մյուս դրույթները՝ 1992 թվականի հուլիսի 1-ին:

▼M2 _____

▼B

Հոդված 27

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

▼M10

ՀԱՎԵԼ ՎԱԾ Ա

ԳԼՈՒԽ I

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1

- Խորհրդի 1964 թվականի հունիսի 26-ի 64/432/ԵՏՀ հրահանգ «Խոշոր եղջերավոր անասունների եւ խոզերի ներհամայնքային առետրի վրա ազդող՝ կենդանիների առողջական խնդիրների մասին» (ՊՏ թիվ 121, 29: 07. 1964թ., էջ 1977/64).
- Խորհրդի խոշոր եղջերավորների դասին պատկանող ընտանի կենդանիների խորը սառեցված սերմնահեղուկի ներհամայնքային առետրի եւ ներմուծման ժամանակ կիրառվող՝ կենդանիների առողջության պահանջները սահմանող՝ 1988 թվականի հունիսի 14-ի 88/407/ԵՏՀ հրահանգ: (ՊՏ թիվ L 194, 22: 07. 1988թ., էջ 10):
- Խորհրդի 1989 թվականի սեպտեմբերի 25-ի 89/556/ԵՏՀ հրահանգ «Խոշոր եղջերավորների դասին պատկանող ընտանի կենդանիների սաղմերի ներհամայնքային առետրի եւ երրորդ երկրներից ներմուծման գործընթացների վրա ազդող՝ կենդանիների առողջապահական դրույթների մասին» (ՊՏ թիվ L 302, 19.10.1989թ., էջ 1):
- Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/426/ԵՏՀ հրահանգ՝ «Ձիազգիների տեղաշարժի եւ երրորդ երկրներից դրանց ներմուծման վրա ազդող՝ առողջապահական քաղաքականության դրույթների մասին» (ՊՏ թիվ L 224, 18. 08. 1990թ., էջ 42):
- Խոզազգիների դասին պատկանող ընտանի կենդանիների սերմնահեղուկի ներհամայնքային առետրի եւ ներմուծման ժամանակ կիրառվող՝ կենդանիների առողջապահական դրույթները սահմանող՝ Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/429/ԵՏՀ հրահանգ (ՊՏ թիվ L 224, 18,08. 1990թ., էջ 62):
- Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 15-ի 90/539/ԵՏՀ հրահանգ՝ «Ընտանի թռչունների եւ ինկուբացիայի համար նախատեսված ձվերի ներհամայնքային առետրի ու ներմուծման վրա ազդող՝ կենդանիների առողջապահական դրույթների մասին» (ՊՏ թիվ L 303, 31.10.1990թ., էջ 6):

դ) Մարդկանց կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման օժանդակ արտադրանքին վերաբերող՝ առողջության հետ կապված կանոնները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 կանոնակարգը (ՊՏ թիվ L 273, 10.10.2002թ., էջ. 1),

▼M10

— Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի 91/67/ԵՏՀ հրահանգ «Ջրային կենդանիների եւ արտադրատեսակների շուկայահանման վրա ազդող՝ կենդանիների առողջապահական դրույթների մասին»։ (ՊՏ թիվ L 46, 19.02.1991թ., էջ1):

— Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի 91/68/ԵՏՀ հրահանգ «Ոչխարների եւ այծերի ներհամայնքային առետրի վրա ազդող՝ կենդանիների առողջապահական դրույթների մասին» (ՊՏ թիվ L 46, 19.02.1991թ., էջ 19):

— Խորհրդի 1991 թվականի նոյեմբերի 19-ի 91/628/ԵՏՀ հրահանգ «Փոխադրման ժամանակ կենդանիների պաշտպանության մասին» եւ այդ հրահանգը փոփոխող՝ 90/425/ԵՏՀ եւ 91/496/ԵՏՀ հրահանգներ (ՊՏ թիվ L 340, 11. 12. 1991թ., էջ 17):

Բաժին 2

90/425/ԵՏՀ հրահանգի Ա (I) (1) հավելվածում նշված՝ հատուկ Համայնքի կանոններով սահմանված կենդանիների առողջապահական համապատասխան պահանջներով չկարգավորվող՝ կենդանիների, սերմնահեղուկների, ձվաբջիջների եւ սաղմերի ներհամայնքային առետրի եւ ներմուծման վրա ազդող՝ կենդանիների առողջության պահանջները սահմանող՝ Խորհրդի 1992թվականի հուլիսի 13-ի 92/65/ԵՏՀ հրահանգ (ՊՏ թիվ L 268, 14.09.1992թ., էջ 54):

– միկրոօրգանիզմների դեպքում՝

89/662/ԵՏՀ հրահանգի I գլխի Ա հավելվածում, իսկ ախտածինների դեպքում 90/425/ԵՏՀ հրահանգում նշված՝ Համայնքի հատուկ կանոններով սահմանված համապատասխան պահանջներով չկարգավորվող արտադրանքի առետրի եւ ներմուծման վրա ազդող՝ կենդանիների եւ հանրային առողջության վերաբերյալ պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17-ի 92/118/ԵՏՀ հրահանգ:

ԳԼՈՒԽ II

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

- Խորհրդի 1977թվականի հուլիսի 25-ի 77/504/ԵՏՀ հրահանգ «Խոշոր եղջերավորների դասին պատկանող զտարյուն ցեղական կենդանիների մասին»: (ՊՏ թիվ L 206, 12.08.1977թ., էջ 8):
- Խորհրդի 1988թվականի դեկտեմբերի 19-ի 88/661/ԵՏՀ հրահանգ «Խոզազգիների դասին պատկանող ցեղական կենդանիների նկատմամբ կիրառվող անասնաբուժական ստանդարտների մասին»: (ՊՏ թիվ L 382, 31 12. 1988թ., էջ 36):
- Խորհրդի 1989 թվականի մայիսի 30-ի հրահանգ «Զտարյուն ցեղական ոչխարների եւ այծերի վերաբերյալ»: (ՊՏ թիվ L 153, 08. 06. 1989թ., էջ 30):
- Խորհրդի 1990 թվականի հունիսի 26-ի 90/427/ԵՏՀ հրահանգ «Ձիազգիների ներհամայնքային առեստուրը ղեկավարող՝ զոոտեխնիկական եւ ծագումնաբանական պայմանների մասին» (ՊՏ թիվ L 224, 18. 08. 1990թ., էջ 55):
- Զտարյուն ցեղական կենդանիների շուկայահանման համար զոոտեխնիկական եւ ցեղաբանական պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1991թվականի մարտի 25-ի Խորհրդի 91/174/ԵՏՀ հրահանգ: (ՊՏ թիվ L 85, 05. 04. 1991թ., էջ 37):

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

**ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՉԵՆԹԱՐԿՎՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ՈՐՈՆՑ
ԱՌԵՎՏՈՒՐԸ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱ Է**

ԳԼՈՒԽ I

Անասնաբուժական օրենսդրություն. Ա հավելվածի I գլխում չթվարկված այլ կենդանի կենդանիներ:

ԳԼՈՒԽ II

Անասնաբուժական օրենսդրություն. Ա հավելվածի I գլխում չթվարկված սերմնահեղուկները, ձվաբջիջները եւ սաղմերը:

▼B

Հավելված Գ

- Դաբադի վիրուս (ԴՎ)
- Խոզերի դասական ժանտախտ (ԽԴԺ)
- Աֆրիկյան խոզերի ժանտախտ (ԱԽԺ)
- Խոզերի բշտիկային հիվանդություն (ԽԲՀ)
- Նյուկասյան հիվանդություն (ՆՀ)
- Խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ
- Մանր որոճողների ժանտախտի վիրուս (ՄՈԺ)
- Բշտային բերանաբորբի վիրուս (ԲԲՎ)
- Ոչխարների լորձային ջերմախտ (բլյուտանգ կամ կապույտ լեզու)
- Ձիերի աֆրիկյան հիվանդություն (ՁԱՀ)
- Ձիու վիրուսային էնցեֆալոմիելիտ
- Տեշենի հիվանդություն
- Ախտածին թռչնի գրիպ
- Ոչխարների եւ այծերի ցան
- Մաշկի ակտինոմիկոզ
- Ռիֆտ հովիտի ժանտախտ
- Խոշոր եղջերավոր անասունների հպավարակիչ պլեյրոպնեւմոնիա